Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի «Գերմաներեն» (42 դասաժամ), «Ռուսաց լեզու» (16 դասաժամ), «Կերպարվեստ» (5 դասաժամ), «Մաթեմատիկա» (18 դասաժամ) «Տեխնոլոգիա» (3 ժամ տղաների խումբ), «Ինֆորմատիկա» (11 դասաժամ), «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» (8 դասաժամ) , «Պատմություն» (23 դասաժամ, այդ թվում՝ «Հայոց պատմություն» /13 դասաժամ/, «Համաշխարհային պատմություն» /8 դասաժամ/ և «ՀԵՊ» /2 դասաժամ/) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024**թ-ի հունվարի** 18-**ից մինչև** 2024**թ-ի հունվարի** 31-**ը ներառյալ**, **ամեն օր՝ ժամը** 10:00-**ից** 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024**թ**. **փետրվարի** 2-**ին՝ ժամը** 12:00-**ին**, Ագարակի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ք.Ագարակ, Չարենցի 21/1: Տեղեկությունների համար զանգահարել 077 74 58 90 հեռախոսահամարով: